ԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ՝ ՀԱՅ ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՄՏՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ (XIX ԴԱՐԻ 70-80-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ)

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ
Պատմական գիտ.թեկնածու
ԵԳՊՄ դոցենտ

XIX դարի 70-80-ական թթ. բնորոշ գիծը ազգային ինքնագիտակցության վերելքն էր: Ժամանակի ազգային զարթոնքի գաղափարախոսները տվեցին ազգային խնդրի ինչպես պատմական ու փիլիսոփայական, այնպես էլ՝ տնտեսագիտական հիմնավորումները: Փաստորեն, նրանք առաջադրեցին ազատագրության ռազմավարական ծրագրեր, որտեղ այլ հարցերի հետ մեկտեղ առանձնահատուկ ուշադրություն դարձրին նաև ազգային տնտեսությանը: Կարևոր էր այն, որ ոչ միայն ավատատիրությունից, այլ արդեն նաև թուրք նորաթուխ բուրժուազիայից հալածվող հայ գործարարները փրկության ելքը պատմական հայրենիքի սահմաններում անկախ պետականության և ազգային շուկայի ստեղծման մեջ սկսեցին տեսնել:

Ժամանակի առաջադեմ մտածողներն ազգային-ազատագրական պայքարի ելակետը և գլխավոր պահանջը համարեցին տնտեսական հարցը, իսկ ավելի որոշակի՝ հողի հարցի լուծումը հօգուտ հողօգտագործողների: Այդ սկզբունքն ուղղակի ազդակ ուներ Մ. Նալբանդյանից: Առանց տնտեսական կայուն հիմքի չի կարող լինել անկախ ժողովուրդ, կնշանակի նաև՝ ազատ հասարակություն. այս համոզումն ունեին նրանք: Արևմտահայ առաջադեմ պարբերականներից մեկը՝ Զմյուռնիայում հրատարակվող «Արևելյան մամուլը», ուշադրություն էր հրավիրում այն կարևոր խնդրին, որ շատ երկրներում *«...տնտեսական խնդրո մ՚առթիվ ժողովուրդներ ոտի ելած և իրենց անկախության տիրացած են»*[1]:

Այս պատմաշրջանի հայ դեմոկրատական միտքն առաջադրում էր վերացնել ոչ միայն ազգային ճնշումը, այլ նաև՝ դարն աղրած ավատատիրական հասարակական հարաբերությունները և համոզված էր, որ միայն այդ դեպքում նպաստավոր պայմաններ կստեղծվեն ժողովրդի տնտեսական վերելքի ու նյութական բարեկեցության համար: Համոզմունք կար, որ ազգային տնտեսությունը ոչ միայն ազգի կազմավորման նյութական խարիսխը, այլ նաև աղազա անկախ պետականության հիմքը կարող է լինել, առանց որի ժողովրդի անկախությունը միանշանակ կվտանգվեր: Քննարկելով այս հարցերը՝ պատմաբան Կ. Դալլաքյանը միանգամայն իրավացի եզրահանգում է. *«...շարժումն այժմ ստանում է շեշտված սոցիալական բնույթ, երբ հայ բարձրացող բուրժուազիային Թուրքիայում տիրող ավատատիրության դեմ պայքարում, ինչպես նաև թուր-*

քական բուրժուազիայի հետ մրցակցության մեջ անհրաժեշտ էր ազգային շուկան իր ազգային հայրենիքի սահմաններում»[2]*:*

Առհասարակ, ազգային տնտեսության ստեղծումն ու զարգացումը կապված են կապիտալիզմի տնտեսական կառուցվածքի հետ: Եվ հենց այդ տնտեսությունն է առանցքն այն պայքարի, որն ամենուրեք մղում էր անկախության ձգտող ազգային բուրժուազիան օտար լծի և ավատատիրության դեմ: Բայց այդ պայքարը միաժամանակ արտահայտում էր ոչ միայն հառնող բուժուազիայի, այլ նաև ամբողջ ազգի շահերը, որովհետև օտար լծից և ավատատիրական կապանքներից այս կամ այն չափով տուժում էր ողջ ժողովուրդը:

Տնտեսական գործոնը որոշիչ դեր ուներ նաև ժողովրդի համախմբման գործում, առանց որի անհնար էր ազգի ազատագրությունը: Առանց անհրաժեշտ տնտեսական նախադրյալների չէր կարող խոսք լինել արդեն հասարակական պահանջ դարձած քաղաքական միավորման և ազգի ձևավորման մասին: *«Ազգային հարստության ճամփան կարող է նաև տանել դեպի ազատություն»*՝ այս համոզումն ուներ «Արևելյան մամուլը»[3]:

Ուսումնասիրվող շրջանում հայկական կապիտալն ավելի շատ աճում էր «լայնությամբ», քան «խորությամբ»: Դա, անշուշտ, ուներ օբյեկտիվ պատճառներ: Խորությամբ զարգանալու հնարավորությունները երկրում չափազանց սահմանափակ էին: Չկային աղրանքադրամային հարաբերությունների զարգացման ամենակարևոր պայմանները՝ սեփականության անձեռնմխելիությունը և զարգացած ներքին շուկան: Իրավ է, լայնությամբ զարգանալով՝ հայկական կապիտալը հզորանում և կարևոր արտաքին կապեր էր ստեղծում: Սակայն հայ մտավորականներից շատերն էին ուշադրություն հրավիրում այն կարևոր հանգամանքին, որ հայրենիքից դուրս աղրող հայերի ունեցվածքը չի կարող ազգային հարստություն համարվել: *«Եթե ամփոփենք ազգային նյութական հարստության ցիրուցան մասունքը,*- գրում է «Արևելյան մամուլի» խմբագիր Մատթեոս Մամուրյանը,- *պիտի գտնենք հող, դրամ, շենք, գործիք, գործարան, դուրս թողլով այն ամեն քաղաքաշեն շինությունները, ճամփաները, ջրանցքները, թանգարանները, երկաթուղիները և այլն, որոց բարիքը թեև քիչ – շատ կվայելեն հայք իրենց գաղթած երկիրներուն մեջ, բայց որովհետև այն երկիրներուն տերերը չեն, և ոչ իսկ Հայաստանի մեջ, բնաթես ազգային հարստության ցուցակին մեջ չեն մտներ»*[4]*:* Մամուրյանը հայ ունևորներին հորդորում էր արդյունավետ օգտագործել դրամագլուխը, այն ներդնել հայրենիքում՝ ազգային տնտեսության մեջ, և դրանով նպաստել դրա զարգացմանը: Դա չափազանց կարևոր էր համարում ոչ միայն ազգային տնտեսության վերելքի, այլ նաև աշխատանքի շուկայի ստեղծման առումով: *«….Քանի քանի ազգային տաճարներ, եկեղեցիներ, վանքեր, քանի քանի աղարանքներ ու հարստություններ կրնամ*

հիշել, որոնց մեջ միայն մեր սնափառության ճարակ տվող հարստություններ ու դրամագլուխներ անգործ կմնան… Կհարցնենք, թե խոհեմությո՞ւն է, իմաստությո՞ւն է ոտահել այնքան գանձեր անգործ ու անարդյուն և դյուրավ կողոպտվելու վիճակին մեջ, մինչդեռ Հայաստանի ամեն կողմ նյութական ու մտավորական թշվառություն կտիրե… մենք հարստության մեջ կմուրանք»[5]*:* Այլ կերպ ասած՝ առաջարկում էր դրամական կապիտալը վերածել արտադրական կապիտալի: Հարստությունը անարդյունք շռայլող մարդիկ, ըստ Մամուրյանի, հասարակական ինչ դիրք էլ գրավեն, «*ազգային կենաց հետ հարաբերություն չեն կրնար ունենալ և իրենց դրամագլխով ազգային շրջանեն դուրս կհամարվին*»[6]: Հիանալի գիտակցելով, որ գործարար մարդուն, այդ թվում նաև՝ հայ գործարարին, ամենից շատ հետաքրքրում է շահը, և դա է նրա վարքագծի հիմնական շարժիչ ուժը, Մամուրյանը փորձում էր խթանել ոչ միայն ունևորների հայրենասիրական զգացմունքները, այլ նաև փաստում Հայաստանում արվելիք ներդրումների գայթակղիչ շահեկանությունը[7]: Նա ուշադրություն էր հրավիրում այն բանին, որ երկիրը բազմաթիվ «*թաքուն գանձեր ունի*», որ շատ բերրի հող և օգտակար հանածոներ ունի, և չափազանց շահավետ կարող են լինել այնտեղ կապիտալ ներդրումները[8]:

Ժամանակի ամենափայլուն դեմքերից մեկը՝ Խրիմյան Հայրիկի սան Գարեգին Սրվանձտյանցը, որը համակողմանի ուսումնասիրել էր արևմտահայ գրեթե բոլոր գավառները, գիտակցելով հարցի կարևորությունը՝ մեծ ցավ էր ապրում, որ չդիմանալով անգլիական և ամերիկյան էժան ապրանքների մրցակցությանը՝ արևմտահայ շատ գավառներում գործարանները փակվել են: Մինչդեռ այդ գործարաններում աշխատում էին մեծ թվով հայեր, որոնք դրանով կերակրում էին իրենց ընտանիքներին: Աշխատանքի կորուստը հուսահատության էր հասցրել վերջիններիս: «*Ինչո՞ւ խանգարված են Ամասիո, Թոխատի, Ակնա, Արաբկիրի, Խարբերդի, Մալաթիո, Տիգրանակերտի, Վանա, Բաղիշո և այլ գավառաց հազարավոր գործարանները: Ամենեն անծանոթ և անշան գեղերու մեջ մտած է Ամերիկայի և Անգլիո ապրանքն...: Ո՞րքան անձինք կ'ապրեին և կրնան ապրիլ այն գործարաններով...*»[9]: Սրվանձտյանցը հայերի հարստության անգործությունն ավելի վտանգավոր էր համարում, քան դրա կողոպուտն ու թալանը: Կ. Պոլսի ունևոր հայերին նա համոզում էր արևմտահայ գավառներում հողատարածքներ գնել, ժամանակակից տեխնիկայով հագեցած տեղի հումքի վերամշակման գործարաններ բացել, աշխատատեղեր ստեղծել և արտադրել շաքար, մետաքս, մահուդ, թուղթ և այլն[10]: *«Հայաստանի ամենամեծ չարիքը յուր կարող որդվոց հեռի մնալն է, և զանի աղքատ և անոպաշտպան ձգելը. պետք է հող գնել, պետք է տեղ-տեղ փոքրիկ պանք [բանկ-Ս. Գ.] հաստատել, որոնք գոնե հայը պանդխտության դիմելե ետ կը կեցնեն….»* [11]*:* Կ. Պոլսի «Արևելք» պարբերակա-

նը նույնպես դժգոհում էր, որ թուրքական ներքին շուկան հագեցած էր Ռուսաստանի և դանուբյան երկրների գյուղատնտեսական մթերքներով (յուղ, ղանիր, ցորեն), մինչդեռ կարող էր հակառակը լինել[12]:

Ազգի զարգացման հիմքը տնտեսականն էր համարում նաև Թիֆլիսում հրատարակվող «Մշակ» թերթի խմբագիր Գրիգոր Արծրունին: *«Մի ազգի տնտեսական կյանքից է կախված նրա մտավոր և բարոյական կացությունը»*[13], - այս համոզմունքն ուներ նա: Պատահական չէ, որ Արծրունին ուշադրություն էր հրավիրում այն բանին, թե «հարուստ դասակարգը», այսինքն՝ հայ բուրժուազիան, վաղ թե ուշ կհասկանա, որ իր *«նյութական շահը մինչև անգամ ղահանջում է ծաղկեցնել Հայաստանի առուտուրը, արդյունագործությունը, խաշնարածությունը, երկրագործությունը: Երանք... կարող են հիմնել Հայաստանում գործարաններ, արհեստանոցներ, գնել հողեր, արդյունաբերել բամբակ, ծխախոտ, վաճառահանել բուրդ, մրգեր...»*[14]:

Ազգային տնտեսության զարգացման գործում չափազանց կարևոր էր ոչ միայն ունեցվածքի սեփականությունը, այլ նաև դրա աղահովության իրավական երաշխիքը: Այս հարցերը հատկապես 70-80-ականներին հանգամանորեն քննարկվում էին «Մշակ», «Արևելյան մամուլ», «Արևելք» և այլ առաջադեմ ղարբերականների էջերում: «Արևելյան մամուլը» սեփականության իրավունքը և դրա ղաշտղանությունը հասարակական զարգացման կենսական ղայման էր համարում: «*Մարդուս մտքին մեջ այնքան հաստատուն է սեփականության իրավանց ճանաչումն ու վայելումի իղձն, որ երբ ի փորձ նկատե, որ ինք կաշխատի և օտար մը կ'վայելե, ինք կ'գործե և ուրիշ մ'իր գործունեության արգասիքը կ'կողոտե, այն մարդն այնուհետև չաշխատիր. այս բավական չէ, եթե ստույգ չլինի որ իր աշխատության արդյունքն որևէ ձևով՝ իր սերունդին ղիտի մնա, դարձյալ չաշխատիր… ընկերությունն իր էության մեկ կենսական ղայմանը՝ սեփականության իրավունքը բռնաբարած տեսնելով՝ խնայողություն, դրամագլուխ, ճարտարություն, արհեստ, գյուտ, հանճար իսղաո կը դադրին, ասոնց հարակից բարօրության հետ*»[15]: Այլ կերղ ասած՝ ըստ հոդվածագրի, սեփականության իրավունքի ղաշտղանությունը և աշխատանքի արդյունքի աղահովությունն են ազգի տնտեսական բարգավաճման երաշխիքները: Սեփականության իրավունքը «մարդու բնական իրավունքն» էր համարում Մ.Մամուրյանը, իսկ այդ իրավունքի երաշխավորը՝ ղետությանը: Բայց երբ վերջինս թերանում կամ արգելքներ է ստեղծում այդ հարցում, աղա *«ընկերային մարդ իրավունք կտա իր բնական իրավանց ղահղանության գործն ստանձնելու և վերահաս վտանգը զինու զորությամբ վանելու»*[16]:

Ազգային տնտեսության հարցին իր հրաղարակախոսական հոդվածներում հանգամանորեն անրադարձել է նաև վիղասան Ռաֆֆին: Ազգի ներուժը բազմակողմանիորեն կարող է դրսևորվել և հանրօգուտ բարիք բերել միայն

ազատության պայմաններում: Այս էր Ռաֆֆու համոզմունքը: *«Որևիցե ժողովրդի համար ոչինչ բախտավոր առագա գուշակել չի կարելի, քանի որ նրա առրուստի պահանջները հաստատուն հիմքերի վրա կայացած չէ, քանի որ նա թե՛ նյութապես և թե՛ բարոյապես մաշվում է և կլանվում է մի ուրիշ ավելի զորեղ տարրից»*, - գրում է նա *Տեղեկագիրք գավառական հարստահարությանց* գրքի վերաբերյալ «Մշակում» տպագրած գրախոսականում[17]: Բայց այն կարծիքին էր նաև, որ դա ամենևին չի նշանակում, թե բոլոր հույսերն ու ծրագրերը պետք է կապել միայն աղագայի հետ և անգործության մատնվել: Նա անհրաժեշտ էր համարում, որ անգամ այնպիսի անտանելի և անհնարին պայմաններում, որոնցում գտնվում էր արևմտահայը տվյալ պատմական փուլում, ազգի շահերով մտահոգ գործիչները ծրագրեր մշակեն, ուղիներ առաջադրեն հայ աշխատավորի վիճակն ինչ-որ չափով բարելավելու և ձուլման վտանգին դիմակայելու համար: Ռաֆֆին հույս ուներ, որ Հայաստանի տնտեսական զարգացումը, ժողովրդի լուսավորությունը, նորաստեղծ մտավորականության եռանդուն գործունեությունը, տնտեսության մեջ նոր տեխնիկայի գործադրումը, երկրի ծայրամասերը կենտրոնի հետ կապելը հնարավոր կդարձնեին ոտքի հանել դարերով նիրհած արևմտահային: Նա համոզված էր, որ ժողովրդի քաղաքական ազատությունը կարևորագույն խնդիր է, բայց դա իրական կարող է լինել միայն այն դեպքում, եթե լուծվի նաև տնտեսական խնդիրը: Ազգային տնտեսության զարգացման հարցում Ռաֆֆին կարևոր էր համարում ոչ այնքան առևտուրը, որքան հողագործությունը և արդյունաբերությունը: Այս տեսակետը առաջադիմական էր այն իմաստով, որ «տնտեսական հարցի» լուծման ծանրության կենտրոնը նա շրջանառության ոլորտից փոխադրում էր արտադրության ոլորտ: Նա իրավամբ համոզված էր, որ միայն զարգացած արտադրության դեպքում գյուղատնտեսական և արդյունաբերական արտադրանքի արտահանումը և վաճառքը հնարավորություն կտան հասարակական շահույթ ակնկալել:

Ռաֆֆին հողը բնության պարգև էր համարում և գտնում, որ այն պետք է լինի հողի աշխատավորի սեփականությունը: Մեծ վիպասանը պաշտպանում էր հողի գյուղացիական մասնավոր սեփականության իրավունքը: Հողային հարցի լուծման՝ Ռաֆֆու առաջադրած ծրագիրը ժամանակի ամենաառաջադեմ տեսակետն էր: Հողի մասնավոր սեփականության իրավունքը կվերացներ ավատատիրական սեփականության հիմքի վրա խարսխված անձնական կախվածությունը և պայմաններ կստեղծեր, որ աշխատանքը դառնա հասարակական գործընթաց: Մի բան, որը չափազանց կարևոր էր ազգի ձևավորման համար: Միաժամանակ դա լիցք կհաղորդեր ապրանքադրամական հարաբերություններին, բնատնտեսության արագ քայքայմանն ու ներքին շուկայի ստեղծմանը: Իսկ զարգացած ներքին շուկան հենց ազգային տնտեսության հիմքն է:

Հողը հարստության ամենակարևոր և «մշտնջենավոր» աղբյուր էր համարում նաև Մկրտիչ Խրիմյանը: Աշխատավոր գյուղացու հոգսերին լավատեղյակ մարդու մտահոգությամբ նա կարևորում էր հողի մշակման մեջ ժամանակակից տեխնիկայի և հողօգտագործման առաջավոր մեթոդների կիրառումը: Խրիմյանը երազում էր, որ հայ գործարարները, փոքրիկ ընկերություն կազմելով, Վանում գյուղատնտեսական գործիքների արտադրության գործարան բացեին: Նրա տեսակետով՝ դա շահավետ կլիներ ինչպես գործի նախաձեռնողների համար, այնպես էլ մեծ աջակցություն կլիներ հայ աշխատավոր գյուղացուն:

Բեռլինի վեհաժողովը շատ բան սովորեցրեց հայերին: *«Աչքը բացավ նա [հայը – Ս. Գ.], զգաց, որ իր ոտքին ներքև հողը կերերի, գուշակեց վերջապես մոտալուտ կործանումը և ինքզինքը գրեթե անպաշտպան, անօգնական գտավ»*[18]: Վեհաժողովից հետո, ի պատասխան 12 երեսփոխանների հարցաղնդման, պատրիարք Ներսես Վարժապետյանը 1878 թ. հուլիսի 21-ին Ազգային ժողովին ներկայացրեց ինչպես Բեռլինի վեհաժողովի արդյունքների, այնպես էլ դրան նախորդած ժամանակաշրջանում իր ծավալած գործունեության վերաբերյալ ընդարձակ հաշվետվություն: Նիստին ներկաների հավանությանն արժանացած այս պատմական հաշվետվության մեջ Ն. Վարժապետյանն առաջ քաշեց նաև հայերի հետագա անելիքների իր ծրագիրը, որում հատուկ նշանակություն տվեց տնտեսական հարցին: Նա անհրաժեշտ համարեց այսուհետև հայ հասարակական միտքը զբաղեցնել հայահավաքման, ինչպես նաև տնտեսական և սոցիալական փաստի գիտակցման խնդիրներով. «*Պատրաստվենք մեր աղագային, - ասաց պատրիարքը, - նախ չմնանք հոս [Կ. Պոլսում - Ս. Գ.], Հայաստան երթանք: Հայաստան ղրկենք ինչ որ ունինք ազգին մեջ բանիբուն, տաղանդավոր, ազգասեր, ուսումնասեր եկեղեցականներ, Հայաստան երթան մեր դաստիարակներ, ուսուցիչներ, մեր այնքան վառվռուն երիտասարդներ, Հայաստան երթան մեր արվեստագետներ, վաճառականներ, Հայաստան երթան մեր դժբախտ պանդուխտներ… ուղիներ պիտի բացվեն, ջրանցքներ պիտի շինվեն, գործարաններ պիտի կառուցվեն, Անգլիո դրամատերք հոն պիտի երթան իրենց դրամը գործածելու, թող երթան մեր դրամատերք այլ, ընկերություններ կազմեն այս օրվանե, ընկերություններ ամեն քաղաք ու գյուղ դպրոցներ հաստատելու համար, ընկերություններ գործարաններ հաստատելու համար: Հնդկաստանեն, Անգլիայեն, Թուրքիայեն, Ռուսիայեն, Ավստրիայեն ու մինչև Պարսկաստանեն միանան ձեռք ձեռքի տան բոլոր հայերը…»*[19]: Պատրիարքի այս կրքոտ ճառը արևմտահայերի կողմից ընկալվեց որպես գործողության ծրագիր և չափազանց կարևոր դեր կատարեց հատկապես պանդուխտ հայերին հայրենիք վերադարձնելու առումով:

Պատրիարքի կոնդակի իրականացման համար արևմտահայ գավառներ մեկնեցին Գարեգին, Վահան, Արիստակես վարդապետները: Հիմնական նպա-

տակն էր՝ հուսադրել հայերին և փորձել կանխել գաղթը: Պատրիարքի կողմից համաղատասխան ցուցումներ տրվեցին նաև գավառների հոգևոր առաջնորդներին. «*Ուրախ եմ ըսելու,- գավառից պատրիարքին գրում էր Գարեգին Սրվանձտյանցը,- թե հաջողեցանք դարձունել իրենց [հայերի - Ս. Գ.] գաղթյալ սիրտերն և գաղթելու պատրաստյալ անձինքները... արթնացավ իրենց մեջ ազգային և հայրենասիրական զգացումն….*»[20]: Այնուհետև Սրվանձտյանցը գրում է, որ շնայած Կարինի հայերը տրամադրված ու պատրաստ էին գաղթելու, սակայն իրեն հաջողվել է համոզել, հուսադրել նրանց, որ տեղահան չլինեն: Եվ կարնեցիները, որոնց վիճակն իրոք որ հուսահատական էր, վարդապետին հավաստիացրել են, որ գերադասում են աղրել, «….*սպասել և շնչել մեր ընտանյաց և զավակաց հետ մեր հայրենական հողին վրա, մեր երկնից ներքև, մեր ջրերուն ափը….*»[21]:

Ազգային ժողովի նիստում Ներսես Վարժապետյանի պատմական ելույթից անմիջապես հետո՝ նույն թվականի օգոստոսին, Դալաթիայում (Գաղաթիա) կազմակերպվեց, ժամանակակիցների վկայությամբ, «շատ անվանի ազգայիններին» հավաք, որը նախագահում էր հենց ինքը՝ պատրիարքը: Հիմնական նպատակն էր ուղիներ փնտրել Արևմտյան Հայաստանի տնտեսության զարգացման համար: Հավաքին մասնակցում էին տարբեր գավառների ներկայացուցիչներ: Վանեցիները նպատակահարմար գտան, որ «….*պզտի ընկերություն մը կազմվի և Վանա ծովակին ջրափնյա գյուղերն ու քաղաքները երթևեկելու և առևտրին կենդանություն տալու համար կրակ և շոգի գործածե*»[22]: Խոսքը Վանա լճի վրա շոգենավեր կառուցելու, դրանով լճի շրջակա գյուղերն ու քաղաքները գործուն տնտեսական կյանքի մեջ ներառելու մասին էր: Դրան հատուկ նշանակություն էր տալիս նաև Իսրիմյան Հայրիկը, որի համոզմամբ դա Վասպուրականը Հայաստանի մյուս նահանգների հետ կապող քարավանային մի քանի օրվա ճանապարհը կարող էր կրճատել և հասցնել մի քանի ժամի: Դա և՛ դյուրին, և՛ շահավետ, և՛ որոշ չափով նաև աղահով կդարձներ հաղորդակցությունը Վանի, Կարինի, Բաղեշի և Արևմտյան Հայաստանի այլ քաղաքների միջև:

Երկրագործությանը զարկ տալու համար առաջ քաշվեց ջրանցքների կառուցման մի քանի ծրագիր: Այս հարցում հատկապես եռանդուն էր հայ հասարակական գործիչ Մարկոս Աղաբեկյանը, որը Հայաստանի տնտեսական վերելքը նաև ջրանցքների կառուցման մեջ էր տեսնում: Նա հանգամանորեն ուսումնասիրել էր Արևմտյան Հայաստանի բնակլիմայական պայմանները, գյուղերի և քաղաքների տեղանքը, մշակելի հողատարածքները և այս բոլորի հիման վրա ներկայացրել ջրանցքների կառուցման իր նախագիծը: Ըստ այդ ծրագրի՝ կարելի էր Եփրատի, Տիգրիսի, Երասխի, Ճորոխի ջրերն իրար միացնել ջրանցքներով և Հայաստանը հարավից՝ Պարսից ծովին և հյուսիսից՝ Սև ծովին կապել ջրային ճանապարհով[23]: Սա, անշուշտ, Հայաստանի տնտեսությանն ու առևտրին մեծ

խթան կլիներ և կնպաստեր ներքին շուկայի աշխուժացմանը: Սակայն դրա իրականացումը, այլ հանգամանքներից բացի, հսկայական գումարների հետ էր կապված, և հասկանալի էր, որ այն մնաց միայն որպես բարի ցանկություն:

Երկրի տնտեսական զարգացման և ներքին շուկայի ընդլայնման գործում առանձնահատուկ տեղ հատկացվեց նաև երկաթուղային շինարարությանը: Աշխատավոր գյուղացու շահերից ելնելով, որը երկրագործական արտադրանքն իրացնել չէր կարողանում նաև վաճառահանման շուկաների հեռու լինելու պատճառով, Բաֆֆին «Կ.Պոլսի մտածողներից» պահանջում էր բարձրացնել «*….Տրապիզոնից Արզերում, այնտեղից Վան, Վանից Մուշ, մինչև Մոսուլ և Բաղդադ երկաթուղի շինելու»*[24] հարցը: Այլ կերպ ասած՝ Բաֆֆին կարևորում էր արտադրության և վաճառահանման ճիշտ և արդյունավետ կազմակերպումը:

Արծրունին մեծ նշանակություն էր տալիս գյուղացիների համար էժան վարկի կազմակերպմանը: Դրա անհրաժեշտությունը հիմնավորում էր վաշխառուական կապիտալի բարձր, ստրկացուցիչ տոկոսների առկայության փաստով: Նա ուշադրություն էր հրավիրում այն հանգամանքին, որ վաշխառուական կապիտալն արգելակում է արտադրողական ուժերի զարգացումը գյուղատնտեսության մեջ, դժվարացնում նոր, առաջադիմական հասարակական հարաբերությունների ծավալումը գյուղում:

Ազատագրական պայքարի պրակտիկ գործիչներից շատերն էին գիտակցում տնտեսական հարցի կարևորությունը և աշխատում հնարավորինս աջակցել հատկապես գավառահայերին: Այսպես՝ շարժման անխոնջ մարտիկներից Արսեն Թոխմախյանը արևմտահայերի գործած գորգերից ու կարպետներից յուրատեսակ ցուցահանդես-վաճառք էր կազմակերպում Թիֆլիսի հասարակական սրահներում, որտեղ նաև գործի մարդու լավատեղյակությամբ զեկուցումներ էր կարդում գավառահայերի վիճակի վերաբերյալ: Վաճառքից ստացված գումարներով Արևելյան Հայաստանից «մերենոս» տեսակի ոչխարներ էր գնում արևմտահայերի համար, որովհետև դրանց բուրդը լավն էր ու նուրբ: Անշուշտ, նպատակն էր ոչ միայն տնտեսապես սատարելը, այլ նաև արևմտահայերի և արևելահայերի միջև սերտ համագործակցություն ստեղծելը:

Ազգային շահերով մտահոգ ժամանակի առաջադեմ մտավորականները, գրողները, հրապարակախոսները քննադատում էին հայ վաճառականներին, հանդիմանում այն բանի համար, որ նրանք կտրված էին ազգային տնտեսությունից և զբաղված հիմնականում միջնորդ առևտրով՝ օտար երկրների արդյունաբերական արտադրանքի առքուվաճառքի շահեկան գործարքներով: Ուշադրություն էին հրավիրում բոլոր այն կասկածելի և արատավոր երևույթներին, որոնք բնորոշ էին հայ վաճառական դասի վարքագծին: Քննադատում էին նաև այն, որ, ժամանակի արկածախնդրական ոգու թելադրանքով և շահի ակն-

կալությամբ՝ հայ վաճառականը մարդկային ու հասարակական իր կերդարի մեջ էր ներառել ազահությունը, նյութաղաշտությունը, հոգևոր ու բարոյական սնանկությունը: Այս ամենով հանդերձ, հատկապես հաշվի առնելով հայ առևտրական դասի նյութական հնարավորությունները, ձեռներեցությունն ու հասարակական դիրքը, ազգային տնտեսության և մշակույթի զարգացման հեռանկարներում վերջինիս որոշակի տեղ և նշանակություն էին տալիս:

Հայտնի է, որ Կիլիկիայի հայկական թագավորության անկումից հետո հայկական կապիտալը փոխադրվել էր հիմնականում Ճենովա, Վենետիկ, Ղրիմ, Լեհաստան, որտեղ ձևավորվել էին հայահոծ գաղութներ: Դրանք Հայաստանի ներուժն էին և կարևոր դեր կատարեցին հատկապես արևմտահայերի մտավոր զարգացման գործում: Կարևոր էր նաև այն, որ նոր, լուսավոր գաղափարները և մտքի նորույթները ճանապարհ էին հարթում դեպի Երկիր նաև հայ վաճառականների քարավանների հետքերով, որոնք Արևմտյան Հայաստանի վրայով ձգվում էին դեպի Պարսկաստան, Հնդկաստան: Հենց այդ նկատի ունենալով՝ Բաֆֆին գրում է, որ հայ վաճառականները «*պիտի լինեն մեր հայտնի ներկայացուցիչքը քաղաքական ազգերի առաջ...*»[25]: Իսկ հայ առևտրական դասը իր բարձր դիրքին կարող է հասնել միայն այն դեպքում, եթե հրաժարվեր առևտրի հետամնաց, «ասիական» ձևերից և ձեռնամուխ լիներ գործի կազմակերպման նոր, առաջավոր մեթոդներին: Առևտրի հնացած ձևերն արտահայտվում էին նրանով, որ հիմնականում միջնորդային էին, տարանցիկ: Չկային զարգացած կապիտալիստական երկրներին բնորոշ առևտրական բորսաները, զարգացած տնտեսական վարկերը և այլն: Աղրանքափոխանակության և այլ գործարքների մեջ իշխում էին «աննորմալ» երևույթներ, հաճախ՝ ուղղակի խաբեություն: Նման հետամնաց վարքագծով հայ վաճառականական կապիտալի համար դժվար էր մրցակցել եվրոպական զարգացած առևտրական ընկերությունների հետ: Դա առավել բացահայտ դարձավ, երբ ցարական կառավարությունը, 70-ական թվականներից սկսած, ելնելով առաջին հերթին Ռուսաստանի ռազմավարական և քաղաքական նկատառումներից, ինչպես նաև երկրամասի «տնտեսական յուրացման» պահանջներից, սկսեց երկաթուղային շինարարություն Անդրկովկասում: 1871 թ. Փոթի–Թիֆլիս երկաթուղու կառուցումով միջնորդ առևտուրը Անդրկովկասի վրայով մեծ թափ ստացավ[26]: Բնականաբար, մեծացավ նաև օտարերկրյա կապիտալի մուտքը Անդրկովկաս: Իրականում սա մեծ վտանգ էր հայ ազգային կապիտալի աճի, կնշանակի նաև՝ ազգային տնտեսության զարգացմանը: 1872-ին «Մշակում» հայ գործարարների դանդաղկոտությունը, անհոգությունն ու նախաձեռնության պակասը քննադատող և սթափեցնող առաջնորդող գրեց Գր. Արծրունին: Մեծ կարևորություն տալով երկաթգծին, շեշտելով դրա կարևոր դերը երկրի տնտեսական և հասարակական կյանքում՝ Բաֆֆին, Արծրունին զգուշացնում էին, որ այն

առաջ է բերում նաև օտար կապիտալի ներհոսքի վտանգ, եթե տեղի դրամատերերը իրենց ձեռքը չվերցնեն երկրի տնտեսական հիմնական զարկերակները, նրա բնական հարստությունները: Այլ կերպ ասած՝ քաղաքական իշխանությունից զուրկ հայ բուրժուազիան եթե չկարողանա լայնորեն տնտեսական գործունեություն ծավալել և վերահսկել ազգային շուկան, ապա վաղվա օրը նրան ոչ մի լավ բան չի կարող խոստանալ:

Այս շրջանում ռուսական կապիտալը նույնպես սկսեց լայնորեն ներթափանցել Անդրկովկաս և գործադրվել հատկապես նավթի, քարածխի, մանգանի արտադրության մեջ՝ Ռուսաստանի զարգացող արդյունաբերությանը հումքով մատակարարելու նպատակով, ինչպես նաև բամբակի մշակության մեջ՝ Ռուսաստանի տեքստիլ մանուֆակտուրաներին բամբակով ապահովելու համար: Եվ եթե նախկինում Անդրկովկասում ճանապարհների կառուցումը նախաձեռնվում էր հիմնականում ռազմավարական նկատառումներով, ապա 70-80-ական թվականներին երկաթգծերն ու խճուղիները անմիջականորեն ծառայելու էին առևտրին ու արդյունաբերությանը: Ռուսական կառավարող շրջանները Անդրկովկասը դիտում էին որպես հումքի աղբյուր և ռուսական արդյունաբերական արտադրանքի սպառման շուկա: Չնայած կովկասահայ բուրժուազիան, լինելով ցարիզմի սոցիալական հենարանը Անդրկովկասում, մասամբ վայելում էր նրա հովանավորությունը, սակայն վերջինիս վարած գաղութային քաղաքականությունը խաթարում էր հայերի տնտեսական ներուժի համակողմանի զարգացումը և ազգային արդյունաբերական բուրժուազիայի կայունացումը: Դա հենց այն էր, ինչին մեծ տեղ և նշանակություն էին տալիս ազատագրական պայքարի գաղափարախոսները: Ցարիզմի ձեռնարկումները որոշակիորեն խփում էին հայ բուրժուազիայի գրպանին ու, բնականաբար, առաջացնում նրա դժգոհությունը: Աստիճանաբար վերջինս ավելի էր զգում ռուս և օտար ավելի զորեղ կապիտալին դիմակայելու իր բացարձակ անկարողությունը: Մրցունակ դառնալու համար «Մշակը» արևմտահայ և արևելահայ վաճառականներին առաջարկում էր գործնական միջոցների դիմել, առաջին հերթին կազմակերպել առևտրական ընկերություններ, բայց ոչ միջնադարյան, այլ ժամանակակից կապիտալիստական բաժնետիրական ընկերություններ: Թերթը փորձում էր տեսականորեն հիմնավորել դրանց անհրաժեշտությունը և հիմնականում ճիշտ էր պատկերացնում այդպիսի ընկերությունների դերը ազգային տնտեսության կազմակերպման և զարգացման գործում:

Կարևոր նշանակություն տրվեց նաև կրթությանը: Մկրտիչ Խրիմյանը կրթությունը, գիտությունն ու արվեստը համարում էր նյութական հարստության աղբյուր և Եվրոպայի օրինակով ցույց էր տալիս, որ դրանց զարգացումը բարեկեցիկ կյանքի նախապայման կարող է լինել: Նա համոզված էր, որ արևելյան

«թմրած» ժողովրդի միտքն ու հոգին անշարժությունից հանելու համար նրան պետք է տալ այն, «*ինչ որ պետք եղավ արևմտյան ազգերին, այսինքն՝ լույս, գիտություն...*»[27]: Նույն տեսակետին էր նաև Գարեգին Սրվանձտյանցը: «*Եղբարք, մեր ազգը պետք է ժամանակի զանգակին սուր ձայնին շմնա խուլ որ ամեն ազգերը կը զարթուցանե իրենց դարավոր և մահագույն թմրութենե…*»[28],- գրում էր նա: Սրվանձտյանցն այն միտքն էր զարգացնում, որ ոչ միայն սուր ունեցողն է ազատ ազգ, այլ նաև այն ժողովուրդը, որն ունի «… *գիտություն, լեզու, գիր, արհեստ և ասնցմով ալ կը վաստկի պատիվ ու հարստություն*»[29]:

Թեմայի քննարկման առումով հարկ է անդրադառնալ մի կարևոր խնդրի ևս. դա ազգային տնտեսության հովանավորման հարցն է: Հովանավորման քաղաքականությունն ամենուրեք ուղղված է եղել ինչպես օտար կապիտալի, այնպես էլ երկրի ներսում ավատատիրության դեմ: Ամենուրեք վերջիններիս դեմ կապիտալիզմի հաղթանակի դարաշրջանը կապված է եղել ազգային շարժումների հետ: Այդ շարժումների տնտեսական հիմքն այն էր, որ աղրանքային արտադրության կատարյալ հաղթանակի համար բուրժուազիան նվաճի ներքին շուկան: Ներքին շուկայում տնօրինելու՝ ազգային բուրժուազիայի պահանջին մեծ տեղ և նշանակություն էին տալիս ազատագրական պայքարի գաղափարախոսները: Ժամանակի հայ առաջադեմ միտքը տեսականորեն հիմնավորեց և պաշտպանեց ազգային բուրժուազիայի առաջ քաշած հովանավորման պահանջը և դա համարեց անհրաժեշտ միջոցառում երկրի արտադրողական ուժերի զարգացման, ազգային էկոնոմիկայի բարձրացման և կայունացման գործում:

Բանն այն է, որ կապիտալիզմի զարգացման տարբեր փուլերում ցանկացած երկրի բուրժուազիա հանդես է եկել հիմնականում երկու պահանջով՝ կա՛մ ազգային արդյունաբերության և առևտրի հովանավորում, կա՛մ «ազատ առևտուր» և «բաց դռների» քաղաքականություն: Ունենալով զարգացած արդյունաբերություն՝ դեռ շատ վաղուց անգլիական բուրժուազիան պահանջում էր, այսպես կոչված, «բաց դռների» քաղաքականություն, որովհետև անգլիական արդյունաբերական արտադրանքը մրցունակ էր և ցանկացած շուկայից կարող էր դուրս վանել տեղի տնայնագործական արտադրանքը: Արդեն XVII դարում Անգլիան իր արդյունաբերական աղրանքներով հեղեղել էր եվրոպական և ասիական շուկաները և դրանով լուրջ արգելքներ ստեղծել տեղական էկոնոմիկայի զարգացման համար:

Ի հակադրություն դրան, կենդանության նշաններ հանդես բերող գերմանական բուրժուազիան XIX դարի կեսերին պահանջեց «հովանավորման» քաղաքականություն՝ հայրենիքում իր դիրքերն ամրացնելու և ազգային էկոնոմիկան անկախ դարձնելու նպատակով: Այս պահանջն իր տեսական հիմնավորումը ստացավ գերմանացի տնտեսագետ Ֆրիդրիխ Լիստի աշխատության մեջ[30]: Հանդես գալով քաղաքատնտեսության սմիթյան դպրոցի դեմ և այն որա-

կելով որպես կոսմոպոլիտական՝ Լիստը դրան հակադրեց տնտեսության զարգացման ազգային համակարգը: Ըստ այդ համակարգի՝ բոլոր այն ազգերը, որոնց արդյունաբերությունը դեռևս գտնվում էր զարգացման ոչ բավարար մակարդակի վրա և պատրաստ չէր «սմիթյան» ազատ մրցությանը՝ պետք է կիրառեն, այսպես կոչված, «հովանավորման» քաղաքականությունը: Լիստը պահանջում էր սահմանափակել օտար արդյունաբերական աղբանքների ներթափանցումը Գերմանիա, կրճատել արտաքին առևտուրը, հովանավորել երկրի սեփական արդյունաբերության զարգացումը, մինչև որ վերջինս դրվի ամուր հիմքերի վրա, և նրա համար կործանարար չլինի օտար մրցակցությունը: Այս սկզբունքը Գերմանիայի համար առաջադիմական նշանակություն ուներ, որովհետև տեղի բուրժուազիան իրականում չէր կարող իր դիրքը պահպանել, ամրապնդել, թափ առնել և հասնել իշխանության, եթե արհեստական միջոցներով չպահպաներ իր արդյունաբերությունը և առևտուրը: Դա գերմանական բուրժուազիայի կայացման և ինքնահաստատման շրջանն էր:

Հայ իրականության մեջ ազգային բուրժուազիայի հովանավորման պահանջի արմատները հասնում են մինչև *Որոգայթ փառաց* վավերագիրը (1788-89): Շահամիրյանի նախագծերում Հայաստանում մարդիկ պետք է հագնեն միայն այնպիսի գործվածքեղեն, որը տեղում է արտադրվել: Ավելին, առաջարկվում էր Հայաստանում արտադրությունը խրախուսելու նպատակով դրսից ներմուծվող գործվածքների վրա հատուկ տուրք դնել[31], իսկ ոսկի և արծաթ ներմուծողներին առհասարակ ազատել տուրքից[32]: Հասկանալի է՝ ոսկին և արծաթը մեծապես կնպաստեին երկրի հարստացմանը և տնտեսական աճին:

Ազգային անկախության ձգտող հայ բուրժուազիան ամենայն իրավունքով առաջ քաշեց ներքին շուկան օտար կապիտալից պահպանելու հարցը[33]: Սա մի պահանջ էր, որ դրվում էր ժամանակի հայ ազգային-ազատագրական շարժումների հիմքում, մի պահանջ, որը հստակորեն տրված է Նալբանդյանի *Երկրագործության* մեջ: Արևմտահայ կյանքում այն տեսականորեն արտահայտվեց լիբերալ բուրժուազիայի այնպիսի գաղափարախոսի գործերում, ինչպիսին էր Նիկողայոս Ղորոյանը: Նա գրում էր, որ թույլ զարգացած տնտեսություն ունեցող երկրներում սեփական արտադրությունը «*նոր ծնած թոչունի մը կը նմանի*» և այդ պատճառով կարոտ է պետության խնամքին, *«մինչև որ օտար ազգաց հետամտությանը անվնաս դիմանալու աստիճանի հասնին նէ՝ պետք է որ տեսակ տեսակ քաջալերությունով զանոնք պաշտպանեն»*[34]:

Ազգային տնտեսության զարգացման հարցերով մտահոգ Մ. Խրիմյանի տեսակետով՝ պետության ամենակարևոր խնդիրներից մեկը երկրի տնտեսական բարեկեցությանը կամ, ինչպես ինքն էր ասում, «շահավաճառությանը» նպաստելը պիտի լինի: Իսկ դրա համար, ըստ Խրիմյանի, իշխանությունը պետք

է «տնտեսական իմաստությամբ» ղեկավարի և այնպես անի, որ երկրի հարստությունը երկրի ներսում մնա և «*չթողուլ, որ յուր հարստության գետերը երթան թափեն օտար ծովերու մեջ*»[35]: Հակառակ դեպքում երկիրը կամայանա: Դա շատ կարևոր էր համարում, որ իշխանությունը ճիշտ կարողանա կիրառել տնտեսական օրենքները: Խրիմյանը համամիտ էր, որ ազատ մրցությունը առևտրի օրենքն է, բայց միաժամանակ այն տեսակետին էր, որ «*յուրաքանչյուր իշխանության ազատ իրավունքն է յուր երկրի շահը առավել պաշտպանելու*»[36]: Եվ քանի դեռ «*շահավաճառության մեջ յուր երկրի բերքն ուրիշ երկիրներե ընդունված բերքերուն հետ հավասարակշռություն չունի.... առա պետությունը պարտավոր է.... օրենքով հաստատել և զսպել ժողովրդի վայելչասիրության ցանկությունը, որ յուր երկրի բերքերը շատանա...*»[37]: Այլ կերպ ասած՝ եթե երկրի ներսում արտադրված ապրանքները ներմուծվածների հետ մրցունակ չեն, ապա, ըստ Խրիմյանի, պետությունը պետք է համապատասխան օրենքներով և հովանավորման քաղաքականությամբ հնարավորություն տա դրանց կայունացմանը և զարգացմանը, մինչև որ ազգային տնտեսությունը մրցունակ դառնա:

Ժողովրդի և պետության հետ սերտ համագործակցության Ռուսսոյի «հասարակական դաշինքի» սկզբունքներն էր պաշտպանում Խրիմյանը: Ըստ Խրիմյանի՝ իշխանությունը «արդար և հավասար» օրենքների ճիշտ կիրառմամբ պետք է նպաստի հասարակության բարգավաճմանը, ժողովուրդն էլ իր հերթին պետք է հարկ վճարի և զորացնի իշխանությունը: Իսկ երկրի օրենքները, նրա համոզմամբ, պետք է հավասարաչափ տարածվեն ինչպես «տկարների», այնպես էլ «զորավորների» վրա, ասել կուզի՝ հասարակական բոլոր շերտերի վրա[38]: Այլ կերպ ասած՝ օրենքի առջև բոլորի հավասարության դեմոկրատական սկզբունքն էր պաշտպանում Խրիմյանը: Իսկ ինչ վերաբերում է հարկերին, ապա նրա տեսակետով՝ դրանք չպետք է լինեն այնքան ծանր, որ ժողովրդի ուժն ու ոգին ջլատեն, հուսահատության հասցնեն: Հակառակ դեպքում ժողովրդի կորովի կորստի հետ կուժաթափվի նաև պետությունը: Իսկ դրա հետևանքները չափազանց աղետաբեր կարող են լինել երկրի համար, որովհետև, Խրիմյանի համոզմամբ, «*...ներքին զեղծումներն զհայրենիք ավելի կը դավաճանեն, քան թե օտար թշնամիք*»[39]: Խրիմյանը սխալ էր համարում տարածված այն կարծիքը, թե աղքատ ու տգետ ժողովրդին ավելի հեշտ է կառավարելը: «*Թշվառ ժողովրդի կյանքը վախճան մը ունի....*»,- գրում է նա, իսկ ժողովրդի վախճանի հետ կկործանվի նաև պետությունը, քանզի իշխելու այլևս բան չի մնա[40]: Խրիմյանի դեմոկրատական հայացքներն արտահայտվում են նաև հասարակական կյանքի կառուցվածքին վերաբերող հարցերում: Դա պաշտպանում էր իշխանության «ընկերվարական» սկզբունքը, այսինքն՝ երբ երկրի կառավարման գործում ժողովուրդը ոչ թե պասիվ, այլ գործուն դեր ունի [41]:

Ազգային տնտեսության զարգացման հեռանկարներն ու հովանավորման խնդիրներն իրենց գեղարվեստական արտացոլումն են ստացել Ռաֆֆու *Կայծեր* վեպում: Վանեցի վաճառականը, որի գործերը շատ հաջող էին ընթանում և անգամ իր սեփական ֆաբրիկաների կտորեղենն էր արտահանում, բաղեշցի իր հյուրի հետ զրույցում համոզիչ փաստարկներ էր բերում. *«...ահա իմ հագուստը ոտքից ցգլուխ պատրաստված է տեղային գործվածքներից… եթե մեզանից յուրաքանչյուրը փոքր-ինչ զսպեր իրան պճնասիրությունից և բավականանար տեղային գործվածքներով, այլևս մեր փողը Եվրոպան չէր տանի, մեր փողը մեր երկրում կմնար»*[42]: Իսկ Գր. Արծրունին միանգամայն իրավացի այն միտքն էր արտահայտում, որ *«ազատ մրցությունը շատ գեղեցիկ բան է զարգացած, քաղաքակիրթ բարձր աստիճանի հասած հասարակության մեջ….»*[43]: Այնինչ այդպիսի մրցակցությունը կարող է կործանարար լինել նոր զարգացող հայ արտադրողների համար[44]:

Բայց հայ բուրժուազիան չուներ իր ազգային պետությունը, որից կարելի էր պահանջել արհեստական միջոցներով, բարձր մաքսատուրքերով կանխել օտարերկրյա արդյունաբերական ապրանքների մուտքը երկիր և տարբեր ձևերով խրախուսել տեղական արդյունաբերությունը, ինչպես այդ լինում է պետականություն ունեցող երկրներում: Այդ պատճառով էլ այս ծրագրերի իրականացման հույսը հայ առաջադեմ միտքը կապում էր հասարակական տարբեր խավերի ազգասիրության և գիտակցականության հետ այնքան, որքան, նրա խորին համոզմամբ, ազգային տնտեսության վերելքը կարող էր նաև նպաստել համազգային բարօրությանը: Տնտեսական այս ծրագրերը, էությամբ լինելով բուրժուական, խիստ անհրաժեշտ էին հայ գյուղացիությանը, նոր ձևավորվող բանվոր դասակարգին, պանդուխտ մշակներին, օրավարձու աշխատողներին: Նման ծրագրերի իրականացումը նրանց համար կարող էր բացել դեմոկրատական զարգացման համեմատաբար ավելի լայն հեռանկարներ:

Այլ կերպ ասած՝ ազգային տնտեսության զարգացման պահանջն իր մեջ նաև դեմոկրատական բովանդակություն էր ամփոփում, որովհետև իշխող ազգի, օտար կապիտալի ճնշումից և ավատատիրական կապանքներից այս կամ այն կերպ տուժում էին ժողովրդի բոլոր խավերը: Անշուշտ, տնտեսական այս խնդիրները, որոնք առաջադրում էին ժամանակի առաջավոր մտածողները, դեռևս հայ ժողովրդին չէին դարձնի իր երկրի և աշխատանքի տերը, սակայն դրանց իրականացումը առաջընթաց քայլ կլիներ լիակատար և վերջնական ազատագրման համար մղվող պայքարում:

1 *Արևելյան մամուլ*, 1879, սեպտեմբեր, էջ 201:
2 Դալլաքյան Կ., *Արշակ Չոպանյան*, Եր., 1987, էջ 30:
3 «Արևելյան մամուլ», 1879, փետրվար, էջ 435:
4 Նույն տեղում, 1879, մարտ, էջ 428:
5 *Արևելյան մամուլ*, 1879, մարտ, 15 431:
6 Նույն տեղում, փետրվար, էջ 434
7 Տե՛ս նույն տեղում, 1878, օգոստոս, էջ 139:
8 Տե՛ս նույն տեղում, 1879, ապրիլ, էջ 472:
9 Սրվանձտյանց Գ., *Երկեր*, հտ. 2, էջ 329:
10 Տե՛ս նույն տեղում:
11 Նույն տեղում, էջ 289:
12 Տե՛ս՝ *Արևելք*, 1889, N1778:
13 *Մշակ*, 1881, N100:
14 Նույն տեղում, N86:
15 *Արևելյան մամուլ*, 1872, մայիս, էջ 207:
16 Նում տեղում, էջ 208:
17 Տե՛ս *Մշակ*, 1878, N 149:
18 *Արևելյան մամուլ*, 1878, նոյեմբեր, էջ 274:
19 *Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ*, 1877-78 թթ., էջ 68:
20 *Մասիս*, 1879, N2224:
21 Նույն տեղում:
22 *Արևելյան մամուլ*, 1878, օգոստոս, էջ 159:
23 Տե՛ս նույն տեղում, էջ 160:
24 Տե՛ս *Մշակ*, 1876, N14:
25 *Մշակ*, 1873, N144:
26 Տե՛ս Маркова А., *Закавказье в торговом отношении*, М., 1884, էջ 27:
27 Տե՛ս Խրիմեան Մ., *Ամբողջական երկեր Խրիմեան Հայրիկի*, էջ 452:
28 ԳԱԹ, Սրվանձտյանցի Ֆ., բ. 2, գ. 65:
29 Նույն տեղում:
30 Տե՛ս Лист. Ф. *Национальная система политической экономии*, С.-П., 1891:
31 Տե՛ս Շահամիրյան Հ., *Որոգայթ փառաց*, Թիֆլիս, 1913, էջ 381 (վերատպված Մադրասի 1773 թ. հրատարակությունից):
32 Տե՛ս նույն տեղում, էջ 263:
33 Այստեղ հարկ է վերադահում անել: Արևմտահայ բուրժուազիայի բոլոր շերտերը չէ, որ էապես շահագրգռված էին այս պահանջով: Թուրքիայի ծովափնյա քաղաքներում ծվարած ծագումով հայ, բայց հարազատ ժողովրդի հետ բարոյական կապերը խզած գործարար որոշ խավեր, որոնք իրենց տնտեսական շահերով սերտորեն առնչվում էին Արևմուտքի զարգացած երկրների հետ և վերջիններիս գործակալն էին Թուրքիայում, պաշտպանում էին ազատ առևտրի սկզբունքը: Ազգային տնտեսության զարգացումն այնքան էլ չէր արտահայտում հասարակական այս շերտերի շահերը: Այս տիպի հային նկատի ուներ Հ. Պարոնյանը, երբ գրում էր. «մզկիթ մը շինել տված է...» (Պարոնյան Հ. *Երկերի ժողովածու*, Եր., 1964, հտ. 2, էջ 224):
34 Չորոյեան Ն., *Քաղաքական տնտեսութեան վրա տեղեկութիւններ,* Կ.Պոլիս, 1849, էջ 247:
35 Խրիմեան Մ., *Ամբողջական երկեր Խրիմեան Հայրիկի*, էջ 434:
36 Նույն տեղում:
37 Նույն տեղում:
38 Նույն տեղում, էջ 433:
39 Նույն տեղում:
40 Նույն տեղում, էջ 435:
41 Նույն տեղում:
42 Ռաֆֆի, *Երկերի ժողովածու*, Եր., 1996, հտ. 6, էջ 441-442:
43 *Մշակ*, 1886, N64:
44 Տե՛ս նույն տեղում:

THE NATIONAL PROBLEM OF INTERNAL MARKET IN THE ASSESSMENT OF THE ARMENIAN DEMOCRATIC THOUGHT

SVETLANA GEVORGYAN
PhD in history
YSAFA professor

The characteristic feature of 70-80-s, 19 century was the national self-conscious rise and the national bright time ideologists proposed strategic liberation projects where together with other issues paid special attention to the national economy. The important part was that not only from feudalism but also from a new emerging Turkish bourgeoisie the presecuted Armenian businessmen started to see the way of salvation in the field of the creation of national market in their statehood Motherland. The demand of the national economical development pushed forward by the Armenian intellectuals summed up also a democratic content so that under the pressure of a ruling nation, foreign capital and from feudal fetters or some way suffered all the subject naps of Armenian nation. The economic factor had a decisive role in the national consolidation matter. Those matterswere discussed thoroughly in "Mshak", "Arevelyanmamul", "Arevelq" and other periodical.

ВОПРОС ВНУТРЕННЕГО РЫНКА В ОЦЕНКЕ АРМЯНСКОЙ ДЕМОКРАТИЧЕСКОЙ МЫСЛИ (70-80 ГОДЫ 19-ГО ВЕКА)

СВЕТЛАНА ГЕВОРКЯН
кандидат ист. наук
профессор ЕГАХ

Характерной чертой армянской действительности после Берлина, был подъем национального самосознания. Идеологи национально-освободительного движения выдвинули стратегические программы, в которых особое внимание уделялось внутреннему рынку. Дело в том, что деловые круги западных армян страдали не только от феодальной системы империи , от иностранного капитала, но уже и от формирующейся турецкой буржуазии. Прогрессивные мыслители нации единственный выход из положения для армян видели в создании внутреннего рынка, национальной экономики и независимой государственности в пределах исторической родины. Такая программа вмещала широкое демократическое обобщение, так как от турецкого ига так или иначе страдали все слои западных армян. Вместе с тем, развитый внутренний рынок играл бы определенную роль в процессе консолидации нации. Эти вопросы активно обсуждались в прогрессивных журналах и газетах того времени, таких как «Мшак», «Аревелян мамул», «Аревелк» и т. д.